ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3660-Ա « 27 » հուլիսի 2026թ.

Ա.ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հ.Ն/48999-26 զեկուցագիրը.

1. Երևանի Կենտրոն վարչական շրջանի, Ա.Խանջյան փողոցի հ.22 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15072026-01-0265 վկայական) գույքը (1.262154հա հողամաս, 10779.45քմ շինություն) անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2031 թվականի սեպտեմբերի 1-ը ժամկետով, տրամադրել «Ձևավորում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Ձևավորում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 2-րդ կետով նշված պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում.

2) սույն որոշումից բխող իրավունքի պետական գրանցման, պայմանագրի նոտարական վավերացման, օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու համար նախատեսված ծախսերը, ինչպես նաև այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են «Ձևավորում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ